

ԳՈՇԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա,
Գիտակրթական միջազգային կենտրոն,
Օլրաթ լեզուների ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՍՎԵՏԼԱՆԱ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական
մանկավարժական համալսարան

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՀՈՒՋԱԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅ- ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՇԵՐՏԵՐԸ. ՀԳԱՆԵՐԻ ԴԻՐՔՆ ՈՒ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆԸ

Հուզագնահատողական արտահայտությունները (այսուհետ՝ ՀԳԱ-ներ) օժտված են կիրառական – շարահյուսական առանձնահատկություններով: Դրանք նախադասության անդամ չեն դառնում, սովորաբար վերաբերում են ոչ թե նախադասության մեկ անդամի, այլ ամբողջ նախադասությանը՝ հաղորդելով այս կամ այն զգացական վերաբերմունքային երանգը և այսպիսով խոսքը հագեցնելով հուզականությամբ ու արտահայտչականությամբ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. հուզագնահատողական, միջարկություն, իմաստաբանական արժեք, քերականական:

Նշենք նաև, որ ՀԳԱ-ները հաճախ կրկնվում են, ինչպես, օրինակ, անգլերենում՝ *ah-ah!, ay-ay!, aye-aye!, chook-chook!, chop-chop!, ha-ha!, haw-haw!, he-he!, ho-ho!, hubba-hubba!, sh-sh!, tut-tut!, uh-uh!, weewee!, yum-yum!*: Հայերենում հանդիպում են հետևյալ կրկնավոր ձայնարկությունները՝ *ջո՛ւ-ջո՛ւ, հա՛ֆ-հա՛ֆ, դա՛-դա՛, խը՛շտ-խը՛շտ, շը՛փ-շը՛փ, շը՛պ-շը՛պ, չը՛պ-չը՛պ, չը՛խկ-թը՛խկ, դը՛մբ-դը՛մբ, վո՛ւշ-վո՛ւշ, ա՛յ-ա՛յ, վա՛յ-վա՛յ* և այլն: Նմանաձայնական կրկնավոր ՀԳԱ-ները երկու լեզուներում էլ արտահայտում են տվյալ զգացումի, հուզական արտահայտության ուժգնություն:

–*Քիշ-քիշ*, –*չարացավ Աթազ ազին:*

– *Ա՛յ-ա՛յ*, – *դժգոհեց Բորը և մապ թափ քվեց:*

Ես ջիրիդ եմ խաղում գորգի վրա, մահակով հարվածներ քալիս, որ մաքրվեն՝ շը՛պ-շը՛պ:

Ah-ah, don't hit!

Uh-uh, Billy, don't be talkin' about that!

Tut-tut, Ken! Everything will soon be different.

Ըստ մի շարք լեզվաբանների, այդ թվում՝ նաև Ռ. Ջեյքոբսոնի¹ միջարկությունները կամ ՀԳԱ-ները, պատկանելով խոսքի հնագույն ձևին, թե՛ անգլերեն, թե՛ հայերեն նախադասություններում կարող են լինել նախադաս, միջադաս և վերջադաս, որոնք առանձնանում են ստորակետով, բացականչական նշանով կամ վերջակետով: Օրինակ՝

ա. նախադաս

Օ՛յ, – ասաց նա, – կովկասցի եռանդուն երիտասարդ է հայտնվել:

Oh, I ain't sick really. I just said that, because I just had to see you.

բ. միջադաս

Բո հորեղբայր Ադամը պսակվելու փղա էր, է...ինացած ուրանավորը չէր կարողանում արյասանել, լաց էր լինում, ասում էր՝ ծանր է: Հիմա քեզ համար

1 Jackendoff R., Semantic Structures. Cambridge MA: MIT Press 1990, p.205.

էլ է ծանր, Սերո ջան, սրանց ցեղն էս:

It was nothing, hmm, I guess my back's broad enough to bear a few hard words.

գ.. վերջադաս

Խելոք էս, կթափես: Աշխօր կգրեն, կգովեն, մի կիլո կարտոլ կփան, կքերես հորդ կփաս, հերդ կուրախանա... Կուրեք ու կպարեք: Էհէ՛:

I should like to say goodbye to my wife, yeah.

ՀԳԱ-ների դիրքը խոսքնթացում կամ նախադասության մեջ հայերենում օգտվել ենք 'ԱՐԵՎԱԿ'-ից և 'ԲԱԿ'-ից, ինչպես նաև Շեքսպիրի ողբերգություններից և դրանց հայերեն թարգմանություններից հանված օրինակներով: Թե՛ գործնական և թե՛ տեսական քննությամբ հաստատվում է, որ ինչ էլ որ անվանեն տարբեր ժամանակներում տարբեր լեզվաբաններ՝ բացականչություն, ձայնարկություն թե միջարկություն, այս լեզվական միավորի դիրքը միջանկյալ է այլ կառուցվածքային միավորների՝ բառերի, շարութների և անգամ նախադասությունների միջև, և այն դրսևորում է խոսողի զգացմունքները, ներակա և արտակա վերաբերմունքը այս կամ այն երևույթի նկատմամբ:

Անգլերենում հեշտ չէ որոշել, մասնավորապես, կապակցված խոսքի դեպքում, թե արդյոք տվյալ ՀԳԱ-ը ներկայանում է որպես առանձին խոսքային արտահայտություն, թե կազմում է մեկ այլ արտահայտության ավարտը կամ դրան հաջորդող նախադասության սկզբնական մասը: Նախադաս ՀԳԱ-ի անկախ լինելը խոսքնթացում անգլերենում երևում է երկար դադարով:

Oh! I did not realize that!

Oh, I did not realize that!

Հայերենում, սովորաբար, ՀԳԱ-ները նախադասության մյուս անդամներից անջատվում են ստորակետով և իրենց վրա ունենում են բացականչական նշան կամ շեշտ որպես առանձնահատուկ հուզական կամ վերաբերմունքային հնչերանգի արտահայտում:

Ա՛խ, աստված հեռու տանի:

Վա՛ հ, էս ի՜նչ երկար ճամփա գնացի-եկա:

– Յա՛, այդքան գործող անձինք ինչո՞վ պիտի սպանես:

Օրինակների վերլուծությունը ցույց է տալիս, որ թե՛ հայերենում և թե՛ անգլերենում ՀԳԱ-ներին բնորոշ է նախադաս դիրքը, և այս դիրքը հաճախ կարող է լինել անկախ, ինչը նշանակում է, որ ՀԳԱ-ները քերականորեն կապված չեն նախադասության որևէ այլ անդամի և շարահյուսորեն, նախադասության մեջ գտնվելով հանդերձ, անկախ են: Կրելով մի դեպքում հուզական, մյուս դեպքում՝ գնահատողական-արտահայտչական, իսկ երրորդում՝ զգացական-հաղորդակցական իմաստ՝ դրանք կարող են միայն գործաբանական առնչություն ունենալ նախադասությանը:

– Թո՛ւ, անամո՞թ լակոտ, գոնե քիչ հաչա՛՝ ձկներս հանգիստ խղճով ուտեն:

Հե՛յ, եկե՛ք այստեղ և Դիանային զարթեցրեք երգով:

–Ա՛խ, թանկագի՛նս, ներողամի՛տ եղեք հիմարիս հանդեպ:

‘Ouch!’ His ankle gave way and he stumbled against Carrie.

Damn! I should have tried harder at the long jump at school.

Oh, you wanted to add something. I am sorry to have interrupted you.

Այնուամենայնիվ, անգլերենում ավելի հաճախ վերջիններս օգտագործվում են բացականչական նշանով ավարտվող նախադասության մեջ: Հայերենում անգլերենի բացականչական նշանին կարող են համապատասխանել շեշտը և բացականչական նշանը, ընդ որում՝ դրանցից յուրաքանչյուրը նույնիսկ մեկ կոնկրետ խոսքի մասով հանդես եկող արտահայտությանը կարող է տալ առանձին իմաստ: Օրինակ՝

–Անո՜ւշ, ընկե՛ր Նաջարյան:

–Անո՛ւշ լինի:

–Անուշի-կըս, շո՛ւտ արի:

–Ուռա՛, այսօր իմ դեմ խաղ չկա, —

զվարթ բացականչեցի ես:

–Ուռա՛, ուռա՛, ուռա՛, – շնորհավոր-
հանքին միաձայն արձագանքեց շարա-
սյունը:

Oh, what a nuisance!

O–oh hoo! Do you want any mushroom?

Հնարավոր է նաև, որ ՀԳԱ–ները լի-
նեն նախադասության վերջում՝ մնացած
մասից առանձնացված ստորակետով:
Այս դիրքում ՀԳԱ–ները համեմատաբար
քիչ են օգտագործվում: Սա սովորաբար
կարելի է հանդիպել անգլերեն *Alas!* մի-
ջարկության և հայերեն *ալվա՛ղ* ձայնար-
կության օգտագործման դեպքում: Քանի
որ մտքի արտահայտումից անմիջա-
պես հետո առավելապես դրա գնահա-
տականն է բնութագրական, ապա այս
դիրքում ՀԳԱ–ները մեծ մասամբ իրենց
իմաստով և գործառնությամբ մոտ են
եղանակավորողներին:

–Որը ես երբեք չե՛մ սարքի, ավա՛ղ:

–Ես կորցրի իմ լավ բարեկամին,
ավա՛ղ...

–Պատժելո՛ւ եմ, բա ո՛նց:

–Վե՛րջ տուր, լա՛վ է՛ լի:

They have arrived too late, alas!

Now it is time for us to part, alas, alas!

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել,
որ հուզագնահատողական արտահայ-
տությունները հաճախ նույնանում են
անգլերենում ընդունված երկրորդային
միջարկություններին, այսինքն՝ ունեն
անկախ իմաստաբանական արժեք,

պայմանականորեն կարող են համարվել
զեղչված անդամով նախադասություն-
ներ՝ արտահայտելով մտավոր վերա-
բերմունք և իրավիճակ: Այս ՀԳԱ–ների
խմբին են պատկանում հրահանգները
և կոչականները՝ ուշադրության ձայ-
նանշանները, օրինակ՝ *զգո՛ւյշ, հեռո՛ւ,
կամա՛ց, դո՛ւրս Help!, Fire!, Careful!,
զեղչված անդամով բացականչություն-
ները, օրինակ՝ եղո՛ւկ, գրո՛ղ, չունե՛-
նա՛մ, ասպվա՛ծ, god!, gosh!, hell!,
Jesus!, shit!.*: Ցանկացած բացականչա-
կան արտահայտություն տեսականորեն
կարող է հայտնվել այս խմբում: Սակայն
գործնականում այս խմբին կարելի է դա-
սել միայն խոսքում տարածում ունեցող,
լայնորեն ընդունված և հեշտությամբ
որպես տվյալ լեզվի հուզագնահատող-
ական կաղապար ծանաչվող արտա-
հայտությունները: Լայն առումով, դրանք
բնածայնություններ, առանձին բառեր,
բնորոշիչ կապակցություններ, արտահայ-
տություններ կամ նախադասություններ
են, որոնք բանավոր խոսքում ծառայում
են որպես զգացական և կամային վե-
րաբերմունքի ուժգնությամբ և շեշտադ-
րումով արված արտահայտություններ,
իսկ գրավոր խոսքում նշվում են շեշտով,
բացականչական նշանով և նախադա-
սության մյուս մասերից անջատվում են
ստորակետներով: Քիչ չեն այն դեպքերը,
երբ սրանք հանդես են գալիս առանձին
նախադասության տեսքով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Jackendoff R., Semantic Structures. Cambridge MA: MIT Press 1990. 322 p.
2. Jackendoff R., Parts and boundaries In B. Levin and S. Pinker (eds.) Lexical & conceptual semantics. Cambridge MA: Blackwell. 1992. pp. 9 – 45.
3. James D.M., Some Aspects of the Syntax and Semantics of Interjections, Papers of the Eighth Regional Meeting of the Chicago Linguistic Society, 1972. pp.162–172.
4. Jespersen O., A Modern English Grammar on Historical Principles, Vol. 6–Morphology, G. Allen & E. Munksgard, London, 1965 / on CD-ROM, version 1.01, OUP, Oxford, 1992.
5. ԱՐԵՎԱԿ. Արևելահայերենի ազգային կորպուս (EANC). www.eanc.net/am/:
6. BNC. The British National Corpus of the English Language. www.natcorp.ox.ac.uk/
7. Վ. Շեքսպիր, Երկեր (Ողբերգություններ՝ «Համլետ», «Օթելլո», «Արքա Լիր», «Մակբեթ») թարգ-
մանությունը Հովհաննես Մասեհյանի, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, Երևան,
1991:

СТРУКТУРНО-СМЫСЛОВЫЕ СЛОИ ЭМАЦИОНАЛЬНО-ОЦЕНОЧНЫХ
ВЫСКАЗЫВАНИЙ (ЭОВ) В АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ, ИХ ПОЗИЦИЯ
И ЦЕЛОСТНОСТЬ

ГОАР ГРИГОРЯН

*Заведующая кафедрой иностранных языков Международного научно-образовательного центра
Национальной Академии Наук РА, кандидат филологических наук, доцент*

СВЕТЛАНА КАГРАМАНЯН

Ванадзорский государственный университет имени Ованеса Туманяна

Психолингвистический, познавательный характер ЭОВ обусловлен познавательными навыками и эмоциональным состоянием духовного мира человека. Эмоции формируют языковую деятельность, выполняют такие познавательные функции, как оценка предметов и событий, стимуляция к действию, регулируют поведение людей. В армянском и английском языках ЭОВ также имеют структурно-смысловые различия, обусловленные данными культурами. Их всестороннему изучению способствует межъязыковой сопоставительный полисимптоматический анализ.

STRUCTURAL – SEMANTIC LAYERS OF EMOTIONAL- ATTITUDINAL EXPRESSIONS
IN ENGLISH AND ARMENIAN LANGUAGES: THEIR POSITION AND COHERENCE

GOHAR GRIGORYAN

*International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of the RA
Head of the Chair of Foreign Languages, Candidate of Philological Sciences, Associate Professor*

SVETLANA GHAHRAMANYAN

Vanadzor State University after Hovhannes Tumanyan

The psycholinguistic, cognitive character of emotional-attitudinal expressions is conditioned by cognitive skills and emotional state of the spiritual world of a human being. Emotions formulate language activities, such as cognitive functions, such as how to evaluate things and events, stimulate to actions and regulate peoples' behavior. In both Armenian and English languages, the emotional –attitudinal expressions have structural-semantic differences conditioned by the cultures. The polysymptomatic comparative interlingual analysis greatly contributes to the thorough study of emotional – attitudinal expressions.